Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան 14 հունիսի 2019թ.

<u>Ժողովի նախագահ՝</u>
Ս. Սուքիասյան - Խորհրդի նախագահ

<u>Խորհրդակցական ձայնի իրավունքով՝</u>
Ա. Խաչատրյան - Բանկի Գործադիր տնօրեն

<u>Դիտորդի կարգավիճակով՝</u>
Ն. Երիցյան - ՀՀ ԿԲ Խորհրդի նախագահի տեղակալ

<u>Ժողովի քարտուղար՝</u>
Լ. Պետրոսյան - Խորհրդի անդամ, Քարտուղար

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ տարեկան ընդհանուր ժողովը կայացավ 2019թ. հունիսի 14-ին ժ.12-00-ին, «Ալբերտ հոլ» դահլիճում (ք.Երևան, Նար-Դոսի 2)՝ Խորհրդի նախագահ Ս. Սուքիասյանի նախագահությամբ:
Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել էր 2019թ. մայիսի 03-ի դրությամբ՝ ըստ բաժնետերերի ռեեստրի տվյալների:
Ժողովը նախագահող պրն. Ս. Սուքիասյանը ողջունեց ժողովի մասնակիցներին, անդրադարձավ ժողովի վարման ընթացակարգին, նշելով, որ ժողովը անց է կացվում համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների և ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի:
Այնուհետ Ժողովի նախագահողը հրապարակեց տեղեկություն քվորումի վերաբերյալ:
Համաձայն Հաշվիչ հանձնաժողովի ներկայացված տվյալների՝ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,852,533 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,485,036 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 80.16%-ը:

Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր են ճանաչվել 6 քվեաթերթիկ 1,396 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:
Քվորումն ապահովված էր, և Ժողովի նախագահողը հայտարարեց ժողովի աշխատանքների սկիզբը:
Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
   (զեկ. Ս. Սուքիասյան)
2. Բանկի Վարչության հաշվետվությունը 2018թ. տարեկան գործունեության մասին:
   (զեկ. Ա. Խաչատրյան)
3. Բանկի 2018թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:
   (զեկ. Ա. Մելիքյան)
4. Բանկի 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունների մասին:
   (զեկ. Ա. Մելիքյան)
5. Բանկի աուդիտն իրականացնող անձի հաստատման մասին:
   (զեկ. Ա. Մուրադյան)
6. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի վերաբերյալ:
   (զեկ. Լ. Պետրոսյան)
7. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգի վերաբերյալ:
   (զեկ. Լ. Պետրոսյան)
8. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության վերաբերյալ:
   (զեկ. Վ. Ջհանգիրյան)
9. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի ընտրության մասին:
   (զեկ. Ս. Սուքիասյան)

Ժողովի նախագահողը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը.

1. Բանկի բաժնետերերի տարեկան ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին

Պրն. Ս. Սուքիասյանը ներկայացրեց Հաշվիչ հանձնաժողովի առաջադրված կազմը.

Հաշվիչ հանձնաժողովի առաջադրված կազմը.
Նախագահ՝

Ա. Խաչատրյան՝ Բանկի Ռազմավարության և մեթոդոլոգիայի բաժնի պետ
Անդամներ
Ա.Աղամյան՝ բանկի Ռազմավարության և մեթոդոլոգիայի բաժնի մասնագետ
Ե. Ալեքսանյան ՝ բանկի Անձնակազմի կառավարման և ուսումնական ծրագրերի բաժնի պետ-ուսումնական ծրագրերի ղեկավար

Քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,340 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Ձեռնպահ՝ 61 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

1. Հաստատել բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի Հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով հետևյալ կազմով.
Նախագահ՝
Ա. Խաչատրյան՝ բանկի Ռազմավարության և մեթոդոլոգիայի բաժնի պետ
Անդամներ
Ա.Աղամյան՝ բանկի Ռազմավարության և մեթոդոլոգիայի բաժնի մասնագետ
Ե. Ալեքսանյան ՝ բանկի Անձնակազմի կառավարման և ուսումնական ծրագրերի բաժնի պետ-ուսումնական ծրագրերի ղեկավար

Ժողովի օրակարգի 2-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց բանկի Գործադիր տնօրեն Արամ Խաչատրյանին:

2. Բանկի Վարչության հաշվետվությունը 2018թ. տարեկան գործունեության մասին

Զեկուցողը համառոտ ներկայացրեց բանկի 2018թ. գործունեության արդյունքները և առաջիկա տարվա զարգացման ծրագրերը և հեռանկարները:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 2-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,340 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Ձեռնպահ՝ 61 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2. Հաստատել Բանկի Վարչության հաշվետվությունը 2018թ. գործունեության վերաբերյալ:

Ժողովի օրակարգի 3-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Արամ Մելիքյանին:

3. Բանկի 2018թ. տարեկան արդյունքներով շահաբաժիններ վճարելու մասին:

Զեկուցողը ներկայացրեց 2018թ. արդյունքներով շահաբաժիններ վճարելու առաջարկը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 3-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,328 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,255 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Ձեռնպահ՝ 56 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

3. 2018թ. արդյունքներով վճարել շահաբաժիններ՝ մեկ բաժնետոմսին 150 ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով ս.թ. հուլիսի 15-ից՝ համաձայն Խորհրդի կողմից հաստատած կարգի:

Ժողովի օրակարգի 4-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Արամ Մելիքյանին:

4. Բանկի 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի բաշխման համամասնությունների մասին:

Զեկուցողը ներկայացրեց բանկի 2018թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման համամասնությունները:
Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 4-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,328 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%

Դեմ՝ 16,255 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Ձեռնպահ՝ 56 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

4. Հաստատել բանկի 2018թ. ֆինանսական հաշվետվությունները և բանկի 2018թ գործունեությամբ ձևավորված և նախորդ տարիների չբաշխված շահույթից 277,879,950 ՀՀ դրամն ուղղել շահաբաժինների վճարմանը, գլխավոր պահուստին կատարել 105,000,000 ՀՀ դրամ մասհանում:

Ժողովի օրակարգի 5-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության պետ Արման Մուրադյանին:

5. Բանկի աուդիտն իրականացնող անձին հաստատելու մասին

Զեկուցողը նշեց, որ համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության» կարգի պահանջներով անցկացված մրցույթի, որպես բանկի 2019թ. գործունեության գնահատման արտաքին աուդիտոր, հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերությունը, որի ընտրության հաստատումը, համաձայն օրենսդրության պահանջների, ներկայացվել է տարեկան ժողովին:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 5-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,345 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Ձեռնպահ՝ 56 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.

5. Բանկի աուդիտն իրականացնող անձ հաստատել մրցույթում հաղթած «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերությանը:

Ժողովի օրակարգի 6-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Լուիզա Պետրոսյանին:

6. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի վերաբերյալ:

Զեկուցողը ներկայացրեց ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի լրամշակված տարբերակը՝ նշելով, որ այն համապատասխանեցվել է գործող օրենսդրությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 6-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,340 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Զեռնպահ՝ 61 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

6. Հաստատել ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի լրամշակված տարբերակը:

Ժողովի օրակարգի 7-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Լուիզա Պետրոսյանին:

7. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի» կանոնակարգի վերաբերյալ:

Զեկուցողը ներկայացրեց ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի» կանոնակարգի լրամշակված տարբերակը՝ նշելով, որ այն համապատասխանեցվել է գործող օրենսդրությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 7-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,340 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Զեռնպահ՝ 61 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

7. Հաստատել ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի» կանոնակարգի լրամշակված տարբերակը:

Ժողովի օրակարգի 8-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Իրավաբանական վարչության պետ Վրեժ Ջհանգիրյանին:

8. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության վերաբերյալ:

Զեկուցողը ներկայացրեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը՝ նշելով, որ այն համապատասխանեցվել է գործող օրենսդրությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 8-րդ հարցի քվեարկության արդյունքները.

Կողմ՝ 1,467,340 ձայն կամ մասնակիցների ձայների 98.808%
Դեմ՝ 16,239 ձայն կամ մասնակիցների ձայների 1.094%
Զեռնպահ՝ 61 ձայն կամ մասնակիցների ձայների 0.004%
Անվավեր՝ 1,396 ձայն կամ մասնակիցների ձայների 0.094%

Ելնելով քվեաթերթիկներով կատարված քվեարկության արդյունքներից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.

8. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

Ժողովի օրակարգի 9-րդ հարցը, որը վերաբերում էր բանկի Խորհրդի ընտրությանը, ներկայացրեց Ժողովի նախագահ Սարիբեկ Սուքիասյանը:

9. Բանկի Խորհրդի ընտրության մասին

Պրն. Սուքիասյանը համառոտ ներկայացրեց բանկի Խորհրդի հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ նշելով, որ Խորհուրդն աշխատել է արդյունավետ և լարված՝ ամբողջովին կատարելով Խորհրդի 2018թ. գործունեության ծրագրի պահանջները:
Խորհուրդն ապահովել է իրեն վերապահված իրավասությունների կատարումը կորպորատիվ կառավարման սկզբունքների ներքո, այն է. իրականացրել է հսկողություն ներքին հսկողության նվազագույն պայմաններին բանկի համապատասխանության ուղղությամբ, ապահովել է բանկի արդյունավետ զարգացումը որդեգրած ռազմավարության ներքո՝ արդյունավետ համագործակցելով գործադիր մարմնի հետ: Խորհուրդը ժամանակացույցի համաձայն վերանայել է բանկի ներքին իրավական ակտերը, կատարելագործել է բանկի կառուցվածքը, պայմաններ է ապահովել բանկի

անձնակազմի վերապատրաստման և անհրաժեշտ կադրերով համալրման ուղղությամբ:
Ներկայացվեց Խորհրդի գործունեությունը բնութագրող որոշակի թվային տեղեկատվություն.
Խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում գումարել է 47 նիստ, որոնց ընթացքում քննարկվել է բանկի գործունեությանը վերաբերվող 478 հարց, կայացվել է 698 որոշում, այդ թվում՝ հաստատվել և վերահաստատվել է 204 ներքին իրավական ակտ, որոնցից՝ 132 կարգ, 40 կանոնակարգ, 16 քաղաքականություն, 11 ծրագիր:
Բացի այդ, հրավիրվել է 11 խորհրդակցություն բանկի գործադիր մարմնի պատասխանատու պաշտոնյաների /մասնագետների/ մասնակցությամբ, որտեղ քննարկվել և պարզաբանվել են բանկի Խորհրդի առաջիկա նիստի և բանկի զարգացմանը վերաբերող հարցերը և հիմնախնդիրները՝ ապահովելով գործադիր մարմնի արդյունավետ աշխատանքը:

Այնուհետև ներկայացվեց Խորհրդի առաջադրված կազմը.

1. Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու
2. Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ
3. Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս
4. Վահագն Խաչատուրյան՝ տնտեսագետ
5. Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ

Պրն. Սուքիասյանը նշեց, որ ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս բանկի Կանոնադրությամբ սահմանված մեխանիզմով Խորհրդի կազմում ընդգրկվելու համար առաջադրվել է փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ: Նշվեց, որ բանկի տարեկան ժողովին ներկա փոքր բաժնետերերը սահմանված ձևի առաջարկներ են ներկայացրել: Այդ առաջարկները ամփոփվել են Հաշվիչ հանձնաժողովի կողմից և ժողովին ներկայացվել տեղեկանքի տեսքով: Պրն. Սուքիասյանը ընթերցեց ստորև բերվող տեղեկանքը, որը վկայում է այն մասին, որ փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի առաջադրման գործընթացին մասնակցել է ընդամենը 809 բաժնետեր:

ՏԵՂԵԿԱՆՔ

№	Փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի առաջադրվող թեկնածուի	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի քանակը	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի ձայների քանակը

	անունը		
1.	Մելիքյան Արամ	616*	119,832*
2.	Ավետիսյան Հայկ	58	6,969
3.	Վահանյան Արամ	1	40
4.	Գալստյան Սեդա	1	11
* ներառյալ կետ 6			
№	Այլ առաջարկ	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի քանակը	Տվյալ առաջարկը կատարած բաժնետերերի ձայների քանակը
5.	Առաջարկ չունեմ	61	2,714
6.	Պաշտպանում եմ առավելագույն ձայն ստացած անձին	127	16,615
7.	Ոչ լիարժեք ներկայացված առաջարկ /ոչ հստակ/	72	3,002
	ԸՆԴԱՄԵՆԸ	809	132,568

Այսպիսով՝ համաձայն ներկայացված տեղեկանքի, որպես բանկի փոքր մասնակիցների ներկայացուցիչ առավելագույն ձայներ է հավաքել Արամ Մելիքյանը:
Այնուհետև, համաձայն գործող օրենսդրության պահանջի, պրն. Սուքիասյանը հրապարակեց առավելագույն ձայներ ստացած բանկի՝ փոքր բաժնետերերի ներկայացուցիչ Արամ Մելիքյանի վերաբերյալ օրենքով պահանջվող տեղեկատվությունը:

Արամ Ռոբերտի Մելիքյան		
Ծննդյան թիվ	27.04.1963թ.	
Մասնագիտությունը	տնտեսագետ	
Կրթությունը	բարձրագույն	
Վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ներքին աուդիտի վարչության պետի տեղակալ	27.09.2007թ-28.06.2012թ
	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի նախագահի խորհրդական	29.06.2012թ-31.07.2012թ

	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ	01.08.2012թ. – 10.08.2016թ.
	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ	11.08.2016թ. – առ այսօր
Տվյալ պաշտոնում /ընտրվելու/ նշանակվելու տարին, ամիսը, ամսաթիվը	29.06.2012թ.	
Նրանց և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը	480 հատ	
Տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ	«Արպարագոն Ինտերնեյշնլ» ՍՊԸ հիմնադիր տնօրեն	
Փոխհարաբերությունների բնույթը տվյալ բանկի և բանկի հետ կապված անձանց հետ	-	

Հաշվիչ հանձնաժողովի նախագահը ներկայացրեց 9-րդ հարցի գումարային /կումուլյատիվ/ քվեարկության արդյունքները.

1. Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու՝ 1,468,981 ձայն
2. Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ՝ 1,468,129 ձայն
3. Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս՝ 1,466,609 ձայն
4. Վահագն Խաչատուրյան՝ տնտեսագետ՝ 1,466,502 ձայն
5. Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ՝ 1,466,504 ձայն

Ելնելով քվեաթերթիկներով կատարված գումարային /կումուլյատիվ/ քվեարկության արդյունքներից և փոքր մասնակցություն ունեցող բաժնետիրոջ ներկայացուցչի առաջադրման արդյունքների ամփոփման տեղեկանքից՝

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ.

9. Հաստատել բանկի Խորհուրդը՝ բաղկացած 6 անդամներից /քվեարկությամբ ընտրված՝ 5 անդամ և առանց ժողովի քվեարկության ներառված փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ/, հետևյալ կազմով.

Սարիբեկ Սուքիասյան՝ ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու
Ռուբեն Հայրապետյան՝ տնտեսագետ-հաշվապահ
Լուիզա Պետրոսյան՝ տնտեսագետ-մաթեմատիկոս
Վահագն Խաչատուրյան՝ տնտեսագետ
Պեր Ֆիշեր՝ տնտեսագետ
Արամ Մելիքյան՝ տնտեսագետ, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ

Սպառելով ժողովի Օրակարգի հարցերը՝ Ժողովի նախագահողը ելույթի համար ձայնը տվեց ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի նախագահի տեղակալ պրն. Ներսես Երիցյանին:

Պրն. Երիցյանը ողջունեց և շնորհավորեց բանկի տարեկան ժողովի մասնակիցներին: Նա նշեց, որ, չնայած իր վարած ակտիվ վարկավորման քաղաքականությանը, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պատմականորեն աչքի է ընկնում վարկերի բարձր վերադարձելիությամբ: Նա նաև նշեց, որ գնահատելի են Բանկի ղեկավարության և անձնակազմի ջանքերը՝ ցուցանիշների կայուն աճ գրանցելու հարցում:
Ամփոփելով իր խոսքը՝ պրն. Երիցյանը ցանկացավ բանկին նորանոր ձեռքբերումներ և ֆինանսական կայունություն:
ՎԶԵԲ հայաստանյան գրասենյակի ղեկավար պրն. Դիմիտրի Գվինդադզեն իր խոսքում նշեց, որ ՎԶԵԲ համար «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ շարունակում է մնալ ՀՀ-ում հուսալի և վստահելի գործընկերներից մեկը:
Ելույթով հանդես եկավ բանկի 2018թ. գործունեության աուդիտն անցկացրած «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության Աուդիտի տնօրեն Արփինե Ղևոնդյանը՝ ներկայացնելով աուդիտի եզրակացությունը:
Իր գոհունակությունը և շնորհակալությունը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին հայտնեցին նաև բանկի մի շարք հաճախորդներ:
Սպառելով օրակարգը և ելույթները՝ բանկի տարեկան ժողովն ավարտեց իր աշխատանքները:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ /Ս.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ/

ՔԱՐՏՈՒՂԱՐ / Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ/